



«Հակոբ Կոջոյան» կրթահամալիր

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Նորագույն մեթոդների և տեխնոլոգիայի կիրառումը տեխնոլոգիայի
դասընթացում»

Հեղինակ՝ Մարիետտա Վազգենի Ավագյան

Ղեկավարներ՝ Ալիսա Թալալյան, Անի Օդաջյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	1
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ.....	2
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ և ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՆԱՐՆԵՐ.....	3
ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿԱՄ ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ.....	4
ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԴԱՍԻ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....	6
ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ.....	8
Խ Ճ Ա Ն Կ Ա Ր.....	9
ՊՐԻՉՄԱ.....	10
Վ Ե Ն Ի Դ Ի Ա Գ Ր Ա Մ.....	11
Բ Ա Ն Ա Վ Ե Ճ.....	11
ՄՏԱԳՐՈՂ ԿԱՄ ՄՏՔԵՐԻ ՏԱՐԱՓ.....	12
ԳԻՏԵՄ, ՈՒԶՈՒՄ ԵՄ ՍՈՎՈՐԵԼ, ՍՈՎՈՐԵԼ ԵՄ / Գ ՈՒ Մ.....	13
Ն Ա Խ Ա Գ Ծ Ա Յ Ի Ն Մ Ե Թ Ո Դ.....	14
Տ – ԱԶԵ ԱՂՅՈՒՄԱԿ.....	15
Գ Ա Ղ Ա Փ Ա Ր Ն Ե Ր Ի Ք Ա Ր Տ Ե Զ Ա Գ Ր ՈՒ Մ.....	16
ՄՏԱԾԻՐ- ԶՈՒՅԳ ԿԱԶՄԻՐ –ՔՆՆԱՐԿԻՐ.....	17
ԵԼՔԻ ՔԱՐՏԻ ԼՐԱՑՈՒՄ.....	17
ԱՇԽԱՏԱՆՔ ՓՈՔՐ ԽՄԲԵՐՈՎ.....	18
Խ Մ Բ Ա Վ Ո Ր ՈՒ Մ.....	19
ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ.....	20
/ՓԳՀ/ ՄԵԹՈԴ.....	20
ՔԱՌԱԲԱԺԱՆ.....	21
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՆԻՎ.....	22
ԷՔՄԿՈՒՐՄԻԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ.....	23
ՁՆԱԳՆԴԻ.....	24
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ.....	25
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	26
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	27

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իր սկզբնավորման ժամանակներից հայ դպրոցը եղել է ժողովրդի քաղաքական ու ազգային գոյատևման պատվարը և առաջընթացի գրավականը: Այսօր էլ պետական ու ազգային խնդիր է համարվում կրթության համակարգի ապահովումը, միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը, դասավանդման նոր մեթոդների կիրառումը:

Հասարակական կյանքի անբաժանելի մաս հանդիսացող կրթությունը բոլոր դարաշրջաններում ուղղված է եղել հասարակության պահանջների բավարարմանը: Կրթության նպատակը մանկավարժության մեջ միշտ եղել է անփոփոխ՝ աճող սերունդը նախապատրաստել կյանքին, ձևավորել տվյալ ժամանակաշրջանի համար հասարակության լիարժեք, ակտիվ անդամներ, իսկ կրթության խնդիրներն անընդհատ փոփոխվել են՝ պայմանավորված նոր հասարակական պահանջների ձևավորմամբ, տվյալ հասարակության տնտեսական, գիտական, մշակութային զարգացմամբ: Այդ պատճառով կրթության ոլորտը ենթարկվում է փոփոխությունների: Կրթության ոլորտում նորարարությունների ներմուծումը միշտ պայմանավորված է գործնական պահանջներով: Արդի մանկավարժական որոնումները նպատակ ունեն ուսուցման գործընթացը դարձնել այնպիսին, որ սովորողները դառնան այդ գործընթացի ակտիվ մասնակիցները, որ նրանց պասսիվ ունկնդրողի դերը փոփոխվի ակտիվ մասնակցի դերով: Արդյունքում աշակերտները դառնում են առավել անկաշկանդ ու ինքնուրույն, նրանց մոտ ձևավորվում են ուսման դրական դրդապատճառներ, ճանաչողական հետաքրքրություններ ու կարողություններ: Սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը ժամանակակից մանկավարժության կողմից դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Տեխնոլոգիան իրերի պատրաստման և գործածման գիտությունն ու արվեստն է: Միայն մարդն է ընդունակ, աշխարհի նյութերը վերափոխելով, ստեղծել կյանքի համար անհրաժեշտ գործիքներ, սարքեր և համակարգեր: <<Տեխնոլոգիա>> առարկան արվեստին հաղորդակից դարձնելու մի ընդգրկուն դասընթաց է : <<Տեխնոլոգիա>> առարկայի դասընթացի ժամանակ սովորողն ազատ է անհատական զարգացման, իր զգացումներն և պատկերացումներն արտահայտելու համար: Գիտելիքները, որոնք ձեռք է բերում սովորողն տեխնոլոգիայի դասերին, կարևոր դեր են խաղում նրա բազմակողմանի զարգացման գործում: <<Տեխնոլոգիան>> երեխաներին սովորեցնում է ստեղծագործել, վերլուծել աշխատանքային գործընթացը, վերահսկել սեփական աշխատանքը, իմաստավորել և հասկանալ շրջապատող առարկայական աշխարհը, գնահատել շրջապատի գեղեցկությունը, պատրաստել նույնպիսի գեղեցիկ և հարմարավետ շինվածքներ: <<Տեխնոլոգիան>> միայն գեղագիտական դաստիարակության միջոց չէ, այն երեխայի բազմակողմանի զարգացման հիմք է, գեղագիտական, բարոյական, մտավոր, ֆիզիկական և աշխատանքային դաստիարակության գործուն միջոց, որն իր բովանդակային շերտերում ընդգրկում է <<ինտեգրում>> բազմանշանակալի հասկացությունը: <<Տեխնոլոգիայի>> դասերին աշակերտները պետք է մտածեն , ճանաչեն : Այդ դասերի նպատակը միայն այն չէ ,որ աշակերտները արհեստներ սովորեն, ծեփակերտեն ,կարեն, ասեղնագործեն :Դրանք յուրօրինակ հոգեբանական և դիդակտիկ հիմք ունեն` պրակտիկ առարկայական գործունեությունը: Դա է <<Տեխնոլոգիա>> ուսումնական առարկայի որոշակի առավելությունը :Անձի արդյունավետ զարգացման միջոց է հանդիսանում պրակտիկ առարկայական գործունեությունը, հատկապես նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում: <<Տեխնոլոգիա>> ուսումնական դասաժամերին աշակերտի կողմից յուրաքայտուր կատարողական առարկայական գործունեություն` աշխատանք թղթով, սովարաթղթով ,բնական ,արհեստական նյութերով ,ծեփակերտում և այլն, աշխատանքային հմտությունների և կարողությունների ձևավորման հետ, զարգանում է նաև աշակերտների ` տվյալ բնագավառի մտածական գործողությունները, ձևավորել գեղեցիկը զգալու, ընկալելու ունակությունները:

Ուսուցման մեթոդներ և մեթոդական հնարներ

Մեթոդը գործունեության եղանակների և հնարների յուրատեսակ համակարգ է, որն ապահովում է գործունեության խնդիրների իրականացումը: Ժամանակակից մանկավարժության մեջ մեթոդների դասակարգման տարբեր սկզբունքներ կան: Դասավանդման ընթացքում մեթոդների հնարների կիրառումը նպաստում է աշակերտների մոտ դասի յուրացմանը, նյութի կամ թեմայի ավելի մատչելի հասկանալուն ու ամրապնդում է գիտելիքները: Ուսուցման մեթոդները ուսուցչի և աշակերտի աշխատանքի այն ձևերն են, որոնք հնարավորություն են ընձեռնում խթանել գիտելիքների ձեռքբերումը, իմաստավորել դրանք, զարգացնել աշակերտի մոտ կարողություններ և հմտություններ, ձևավորել աշակերտների աշխարհայացքը, զարգացնելու նրանց ընդունակությունները: Ուսուցման մեթոդները պայմանականորեն կարելի է ներկայացնել երկու խումբով՝ ավանդական և նոր կամ ժամանակակից՝ ակտիվ ինտերակտիվ մեթոդների:

Հետազոտությունները ցույց են տվել, որ

Երբ դուք ինչ-որ բան կարդում եք՝ հիշում եք 10%

Երբ դուք ինչ-որ բան լսում եք՝ հիշում եք 20%

Երբ դուք ինչ-որ բան տեսնում եք՝ հիշում եք 30% 2

Երբ դուք ինչ-որ բան տեսնում և լսում եք հիշում եք 50%

Երբ դուք ինչ-որ բան ինքնուրույն եք անում՝ հիշում եք 90%-ը:


Նոր կրթական ռազմավարությունը բերել է նոր մեթոդների, մոտեցումների իրագործմանը՝ ակտիվ ինտերակտիվ մեթոդների կիրառմանը: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար:

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան:


Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել:

Ինտերակտիվ կամ փոխներգործուն ուսուցման էությունը

Ինտերակտիվ նշանատում է փոխանցել կամ գրույցի, եկվխոսության մեջ գտնվել որևէ մեկի կամ համակարգչի հետ; Հետևաբար ինտերակտիվ ուսուցումը ուսուցում է երկխոսության միջոցով: Ուսուցման պրոցեսում տարբերում են դասավանդման պասիվ, ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ:



Այս դեպքում ուսուցիչը հիմնական գործող անձն է, որը ղեկավարում է դասընթացը, իսկ աշակերտները պասիվ լսողներ են: Ուսուցիչ աշակերտ կապը իրականացվում է հարցումների, թեստերի, ստուգողական աշխատանքների միջոցով: Այս մեթոդը քիչ արդյունավետ է, առավելությունը միայն սահմանափակ ժամանակում նյութի մեծ ծավալի մատուցումն է: Ակտիվ մեթոդները հիմնված են ուսուցիչ աշակերտ համագործակցության վրա, այսինքն ուսուցիչը և աշակերտը հավասարապես մասնակցում են ուսումնական պրոցեսին:




Աշակերտները պասիվ լսողներ չեն, այլ ակտիվ մասնակիցներ:

Ակտիվ մեթոդների նպատակն է՝ բոլոր պրոցեսների (խոսք, հիշողություն, երևակայություն) օգտագործումն գիտելիքների, հմտությունների յուրացման համար: Աշակերտը գիտելիք է ստանում տարբեր աղբյուրներից ինֆորմացիայի վերլուծման արդյունքում: Ակտիվ ուսուցման մեթոդները սովորելու, ճանաչողական գործունեություն ծավալելու ուղիներն են, ինչի համար աշակերտները պետք է մտածեն, ստեղծագործեն:

Ինտերակտիվ մեթոդը կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձև: Այս հասկացությունը ծագել է անգլերեն «interact», «inter-փոխադարձ», «act-գործել» բառերից:

Ինտերակտիվ ուսուցումը դա երկխոսությամբ ուսուցում է, որի ընթացքում աշակերտները համագործակցում են ոչ միայն ուսուցչի, այլև միմյանց հետ:



Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցիչը նոր գիտելիքներ փնտրելու իր հանձնարարություններով աշակերտներին ուղղորդում է անկախ հետազոտությունների կատարմանը:

Ուսուցիչ գործառույթներն են՝

1. Բացատրել սպասվելիք աշխատանքի նպատակը: Դասի սկզբում հայտարարել թեման և քննարկվող հարցերը:

2. Բաժանել աշակերտներին խմբերի և տալ հանձնարարություններ:

3. Չթողնել առանց ուշադրության սխալ մեկնաբանությունները, սակայն միևնույն ժամանակ միանգամից չտալ ճիշտ պատասխանը:

4. Հետևել, որ քննադատվի միտքը, կարծիքը, այլ ոչ թե միտքը արտահայտող աշակերտին:

5. Օգնել աշակերտներին գալ ընդհանուր եզրահանգման և դասի վերջում անել եզրակացություններ, որոնք ունեն պրակտիկ և ընդհանուր նշանակություն:

Ուսուցչի գործառույթը աշակերտի ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն է : Հայտնի է, որ նոր բան սովորելիս մարդը թույլ է տալիս սխալներ, ուսուցչի խնդիրը կայանում է նրանում, որ աշակերտը ուսումնական պրոցեսում կատարված սխալները ուսումնասիրի, վերլուծի և հետագայում թույլ չտա: Ինտերակտիվ մեթոդները կիրառելիս, ուսուցիչը դադարում է լինել տեղեկատվության հիմնական տեղեկատու, միայն կարգավորում և կազմակերպում է գործընթացը, տալիս խորհրդատվություն

ԻՆՏԵՐՆԱԿՏԻՎ ԴԱՍԻ ՄԿՉԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Բոլոր մասնակիցները հավասար են
- 1.Յուրաքանչյուր աշակերտ իրավունք ունի իր կարծիքը ներկայացնել ցանկացած հարցի վերաբերյալ
 - 2.Աշխատանքի մեջ պետք է ներգրավված լինեն բոլորը
 - 3.Ոչ մի աշակերտ չի քննադատվում
 - 4.Պետք է հոգալ մասնակիցների հոգեբանական պատրաստվածության մասին. խոսքը գնում է նրա մասին, որ ոչ բոլոր մասնակիցներն են հոգեպես պատրաստ ներգրավվելու այս կամ այն աշխատանքի մեջ: Այս առումով օգտակար է գովքը, ակտիվ մասնակցության ինքնադրսևորման համար:
 - 1.Ուսուցիչը պարբերաբար ակտիվացնում է աշակերտների համագործակցությունը, հանում աշակերտների միջև առաջացած լարվածությունը:
 - 2.Քննարկման ընթացքում անկանխատեսելի դժվարությունների դեպքում ուսուցիչը միջամտում է :
 - 3.Ակտիվ օգտագործվում է տեխնիկական ուսուցման միջոցներ՝ սլայդներ, ֆիլմեր, տեսահոլովակներ :
 - 4.Հաղորդակցությունը իրականացվում է ուսուցչի կողմից ձևակերպված կանոնների համապատասխան:
- Ինտերակտիվ մեթոդների կիրառման դրական արդյունքներն են՝*
- 1.Ինտերակտիվ ուսուցման մեթոդները թույլ են տալիս ակտիվացնել գիտելիքների յուրացման գործընթացը և դրանց ստեղծագործական կիրառումը գործնական խնդիրների լուծման համար:
 - 2.Ինտերակտիվ ուսուցումը մեծացնում է աշակերտների մոտիվացիան, ներգրավվածությունը քննարկվող խնդիրների լուծման մեջ, ինչը մեծացնում է հետաքրքրությունը, հուզական խթան է հանդիսանում հետագա որոնման գործունեությանը, խրախուսում է նրանց կոնկրետ գործողությունների:
 3. Ձևավորում է ինքնուրույն տեղեկատվություն գտնելու, վերլուծելու կարողությունը:
 - 4.Զարգացնում է մյուսների տեսակետը լսելու, համագործակցելու կարողությունը:
 - 5.Աշակերտների դիրքորոշման մշտական արտահայտությունը վերացնում է սխալի

վախը՝ քանի որ նույնիսկ սխալ արտահայտությունը չի պատժվում բացասական գնահատականով:

6. Համատեղ գործնեությունը նպաստում է ուսուցչի հետ վստահելի

փոխհարաբերությունների առաջացմանը:

Այնպիսի մեթոդներ և տեխնոլոգիաներ հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցիչները հնարավորություն ունեն զարգացնել աշակերտների ստեղծագործական, կրեատիվ մտածելակերպը: Դա ընդունակություն է գտնել նոր, օրիգինալ, ստանդարտ մտածելակերպից դուրս մտքեր, առաջացած խնդիրների լուծում ոչ ավանդական եղանակներով:

Դասի խթանման փուլի ակտիվ մեթոդներ են՝ մտագրոհ, պրիզմա, հարցեր, համառոտ զրույց և այլն:

Խթանման փուլի հիմնական նպատակներից են՝

1. Նախապատրաստել սովորողներին նոր դասի ընկալմանը, դա կարելի է կատարել նախորդ դասի հարցման, ամփոփման միրոցով հատկապես երբ նոր դասը հնի շարունակությունն է:

2. Բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների գիտելիքները:

3. Ակտիվացնել աշակերտներին՝ ներգրավելով նրանց քննարկվելիք նյութի մեջ:

4. աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում:

Դասի նախապատրաստական մասը պետք է սկսել կազմակերպչական հարցերի լուծումով, տնային աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ պարզաբանումներով, նոր դասի թեման և նպատակը հաղորդելով:

Դասի իմաստի ընկալման փուլի ժամանակ կիրառելի մեթոդներ կարող են լինել՝ Վենի դիագրամա, աղյուսակների կազմում/ S-աձև, Մ-աձև/, խճանկար, ապագայի անիվ, համառոտ դասախոսություն կամ պատմել, զրույց, խորանարդում և այլն Դասի կշռադատում փուլի ժամանակ նպատակահարմար է կիրառել հետևյալ մեթոդները՝ քառաբաժան աղյուսակ, գաղափարների քարտեզագրում, թեստեր, հարցեր ու պատասխաններ, ամփոփում և այլն:

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Ուսուցման ինտերակտիվ մեթոդներն են՝

- Խճանկար
- Պրիզմա
- Բանավեճ
- Մտազրոհ
- Վենի դիագրամ
- Գույս /գիտեմ,ուզում եմ սովորել, սովորել եմ/
- Գործնական և դերային խաղեր
- Նախագծային մեթոդ
- T – աձև աղյուսակ
- Գաղափարների քարտեզագրում
- Մտածի՛ր գուգորդի՛ր, մտքեր փոխանակիր
- Խմբավորում
- Փոխներգործուն նշանների համակարգ
- Աշխատանք փոքր խմբերով

Խ Ճ Ա Ն Կ Ա Ր

Մեթոդի նպատակն է՝

1. ուսուցանվող նյութի որոշակի հատվածի, հիմնախնդրի ուսումնասիրում դրանց ուսուցանում դասընկերներին ,

Մեթոդի փուլերն են՝

1. Նյութի ուսումնասիրում և տեղեկատվության հավաքում
2. Աշխատանք փորձագիտական խմբում
3. Աշխատանք հենակետային խմբում
4. Ավարտական աշխատանք
5. Աշխատանքի ամփոփում

Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է , որի կիրառության ժամանակ աշակերտները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի , որոշակի ասպեկտի, որոշակի հիմնախնդրի մեջ և դրանք ուսուցանում իրենց դասընկերներին: Այս մեթոդի կիրառումը արդյունավետ է Տեխնոլոգիա առարկայի դասաժամերին : Խճանկար մեթոդը բաժանվում է հետևյալ փուլերի՝

Փուլը	Նկարագրությունը
Նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում	Աշակերտները հենակետային խմբերի:Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթաթեմայի փորձագետ:Փորձագետները ուսումնասիրում են իրենց ենթաթեման,հավաքում են տեղեկատվություն:
Աշխատանք փորձագիտական խմբում	Փորձագիտական խմբի աշակերտները համեմատում են, հարստացնում իրենց նյութերը:
Աշխատանք հենակետային խմբում	Յուրաքանչյուր փորձագետ հենակետային խմբի մյուս անդամներին սովորեցնում է ենթաթեման :
Ավարտական աշխատանք	Աշակերտներից յուրաքանչյուրը ներկայացնում է ամբողջ թեման :
Ամփոփում	Արդյունքներն ամփոփվում են ըստ անհատական և խմբային ցուցանիշների

ՊՐԻՉՄԱ

Մեթոդը կիրառվում է խթանման փուլում: Այն հնարավորություն է տալիս սովորողներին ազատ ու անկաշկանդ մտածել որևէ թեմայի շուրջ:

Մեթոդը արդյունավետ է կարճ, համառոտ բառերի, հատկանիշների թվարկման ժամանակ: Մեթոդի կիրառումը ապահովում է ակտիվություն,


աշխուժություն, ֆիզիկական շարժունակություն, թարմություն և հետաքրքրություն:

Այս մեթոդը կիրառվում է դասի սկզբնական փուլում, կապ հաստատելով սովորողների ունեցած գիտելիքների, պատկերացումների և ուսուցանվող նյութի միջև:

Պրիզմայի կատարման ընթացքը .

1. Տրվում է մեկնաբանող՝ այն հիմնական հասկացությունը, որն ուսումնասիրվելու է:
2. Գծապատկերի մյուս երկու վանդակներում առանց քննարկման լրացվում են սկզբնաբառի հետ ասոցացվող առաջին երկու պատահական բառերը, այնուհետև լրացվում են նախորդ երկու բառերին ասոցացվող բառեր:
3. Պրիզման եզրափակվում է վերջնաբառով:
4. Պրիզմայի ամփոփիչ քայլը սկզբնաբառի և վերջնաբառի միջև տրամաբանական կապ գտնելն է:



Կիրառվում է պրիզմայի մեկ այլ տեսակ, որտեղ ուսուցչի կողմից լրացվում է սկզբնաբառն ու վերջնաբառը, որից հետո աշակերտները լրացնում են բաց թողնված վանդակները:



Վ Ե Ն Ի Դ Ի Ա Գ Ր Ա Մ

Մեթոդը կիրառվում է գաղափարները հակադրելու կամ դրանց ընդհանրությունը ցույց տալու համար:

Վենի դիագրամը կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հասման մեծ մակերես ունեն կենտրոնում: Այս դիագրամը կարելի է օգտագործել գաղափարների կամ թեմաների ընդհանրությունները ցույց տալու կամ միմյանց հակադրելու նպատակով: Այստեղ շեշտվում են յուրաքանչյուրի բնորոշ առանձնահատկությունները: Վենի դիագրամը կարող է այլ զծապատկերներով հանդես գալ, եթե մտքերի գրառման համար նախատեսված տարածքները չեն բավարարում: Բացի այդ այն կարող է ունենալ նաև բարդ կառուցվածք՝ երեք-չորս հասկացությունների համեմատության համար:



Բ Ա Ն Ա Վ Ե Ճ

Բանավեճը կոնկրետ հիմնահարցերի վերաբերյալ հայացքների, կարծիքների փոխանակման, քննարկման ձևով ուսուցման ակտիվ մեթոդ է:

Մեթոդը կիրառվում է, երբ նպատակ է դրվում՝

1. ձևավորել նոր գիտելիքներ
2. ձևավորել հաղորդակցական հմտություններ
3. սովորողների մոտ ապահովել այս կամ այն հարցերի մասին խորհելու, դրանց էության մեջ ներթափանցելու մոտիվացիան
4. սովորողներին օգնել սեփական կարծիքը ամրապնդելու և պահպանելու հարցում:

ՄՏԱԳՐՈՂ ԿԱՄ ՄՏՔԵՐԻ ՏԱՐԱՓ

Մտագրոհը գաղափարների վերարտադրման մեթոդ է:

Մեթոդի գլխավոր գործառույթը մտքերի գեներացիան է:

Մեթոդի անցկացման կանոններն են՝

1. Ցանկացած քննադատության բացակայություն
2. Գաղափարների խրախուսում
3. Մասնակիցների հավասարություն
4. Զուգորդումներ
5. Բոլորի մտքերի գրառում
6. Վերջնական վերլուծության ժամանակը

Մեթոդի կիրառման ժամանակ ստեղծագործական մտածողությունն անցնում է երեք փուլով՝

1. մտքերի գեներացիա,
2. մտքերի վերլուծություն և գնահատում,
3. մտքերի կիրառում կոնկրետ իրավիճակում

Դասի խթանման փուլի մտքերի տարափը կամ մտագրոհը սովորողների աշխատանքի պարզագույն, բայց շատ արդյունավետ մեթոդներից է: Դրա

գլխավոր գործառույթը մտքերի գեներացիան է: Այս մեթոդը մտքերի տարափ են անվանում քանի որ խրախուսվում է հաճախ պարզապես ուսումնասիրվող նյութի հետ այս կամ այն կերպ առնչվող բառեր թվարկելն ու գաղափարներ արտահայտելը:

Դասարանի աշակերտների առջև կոնկրետ խնդիր է դրվում նրանցից յուրաքանչյուրը արտահայտում է սեփական տեսակետները առանց որևէ մեկնաբանության կամ գնահատական տալու փորձի: Բոլոր մտքերն ու գաղափարները գրանցվում են մաքուր թղթի կամ գրատախտակի վրա: Ավելին պատկերավոր բնութագրելու համար երբեմն ասվում է որ <մտագրոհ> մեթոդը կիրառելիս արտահայտված բոլոր մտքերն ու գաղափարները ընդունելի են << սխալ >> չկա: Մտագրոհը մեծապես նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը: Նշենք որոշ հանգամանքներ՝ մեթոդը նպաստում է նոր գաղափարների ի հայտ գալուն:

ԳԻՏԵՄ, ՈՒԶՈՒՄ ԵՄ ՍՈՎՈՐԵԼ, ՍՈՎՈՐԵԼ ԵՄ

Գ Ու Ս

ԸՆՏՐՎԱԾ ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ		
ԳԻՏԵՄ	ՈՒԶՈՒՄ ԵՄ ԻՄԱՆԱԼ	ՍՈՎՈՐԵԼ ԵՄ

ԳՈՒՄ-ը երեք սյունակից բաղկացած մի աղյուսակ է, որը կարող է դառնալ աշակերտի ուղեցույցը կարդալու ընթացքում: Աղյուսակը կարելի է գծել մեծ թղթի վրա, գրատախտակին կամ ցուցադրել ցուցապաստառի վրա:

Այս մեթոդը կիրառում է հետևյալ քայլերը.

1. Ուսումնական առարկայի ընտրված հատվածիթե ինչ գիտեն դասի թեմայի մասին և նրանց ասածները գրի առեք աղյուսակի առաջին՝ <<Գ- ինչ գիտենք արդեն>> սունյակիմեջ:

2. Աշակերտներին հարցրեք, թե թեմային կապված ինչ հարցեր ունեն, և գրանցեք դրանք աղյուսակի երկրորդ՝ «Ու - ի՞նչ ենք ուզում իմանալ» սյունակում:

ՈՍԱշակերտներին օգնե՛ք դասակարգելու իրենց գիտելիքներն ու հարցերը և մի առանձին ցուցակ կազմեք, անվանե՛ք այն «Տեղեկատվության ինչ տեսակներից ենք ակնկալում օգտվել»:

3. Երբ սովորողները վերջացնեն կարդալը, նրանց ուշադրությունը հրավիրեք երրորդ սյունակի վրա՝ «Ս - ի՞նչ ենք սովորել»: Առաջարկեք թվարկել թեմային վերաբերող նոր տեղեկություններ, որոնք հայտնաբերել են կարդալու ընթացքում , և գրի առեք դրանք երրորդ սյունակում:

4. Երբ ԳՈՒՄ աղյուսակը լրացված է, ամփոփե՛ք ամբողջ խմբի կամ առանձին սովորողների կողմից դասակարգված ողջ տեղեկությունը:

Ն Ա Խ Ա Գ Ծ Ա Յ Ի Ն Մ Ե Թ Ո Ղ

Մեթոդի նպատակն է՝

1. սովորեցնել սովորել
2. ուղղորդել իմացական գործընթացը,
3. խթանել հետազոտական աշխատանքը,
4. զարգացնել ստեղծագործական միտքը,
5. ինֆորմացիան վերլուծելու կարողության զարգացում,
6. ինտելեկտուալ գործունեության սեփական փորձի ձեռք բերում:

Նախագծային մեթոդ

Ամփոփիչ / Ընթացիկ

Ատանձնացվում է ուսումնական նյութի միայն մի մասը

Գնահատվում է սովորողների որոշակի ուսումնական նյութի յուրացման

մակարդակը:

Նախագծային մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով:

Նախագծային մեթոդը հետազոտական, պրոբլեմային, ստեղծագործական մեթոդների համադրություն է: Այստեղ ուսուցիչը ստանձնում է մշակողի, համակարգողի,


փորձագետի, խորհրդատուի դեր: Սա նշանակում է, որ նախագծային մեթոդի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն

ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում

կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը:

T – ԱՁև ԱՂՅՈՒՍԱԿ

Մեթոդական ճկուն միջոցներից է, որը կիրառվում է միևնույն հասկացության, միևնույն խնդրի երկու կողմերը՝ դրական կամ բացասական կողմերը, համեմատելու համար: Մեթոդը իրականացվում է դասի տարբեր փուլերում:



T-աձև աղյուսակը կիրառվում է միևնույն հասկացության, խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Այն կազմված է երկու բաժնից, որտեղ լրացվում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր դրակները, դրական կամ բացասական կողմերը: T տառը հիշեցնող աղյուսակի սյունակները նպատակահարմար է քննարկումների ժամանակ երկու տարբեր պատասխանների (կողմ/դեմ, այո/ոչ) կամ հակադրություն/համադրություն արտահայտող արձագանքների գրառման համար: Սա գծագրական դասակարգիչներից ամենապարզն է: Այն կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս : Օրինակ , աշակերտները կարող են անրադառնալ T-աձև աղյուսակին, երբ պատրաստվում են անհատական կամ խմբով որևէ թեմայի շրջանակում աշխատանքի:


Գ Ա Ղ Ա Փ Ա Ր Ն Ե Ր Ի Ք Ա Ր Տ Ե Ջ Ա Գ Ր Ո Ս

Մեթոդը մտքերի և դրանց փոխհարաբերությունների տարածական պատկերումն է: Այն օգնում է՝

1. գիտակցված ձևով սովորել,
2. ընդունել նոր տեղեկատվությունը և տեսողական պատկերի միջոցով ներկայացնել, թե ինչպես են տվյալ ոլորտի գաղափարները փոխկապակցվում:

Այս մեթոդական հնարն օգնում է սովորողներին շատ բաներ տարբեր տեսանկյուննից հասկանալ ,այսինքն՝ մտածողության տարբեր ձևեր օգտագործել:Գաղափարների քարտեզ կազմելու գործընթացը ուսումնառության գորեղ ռազմավարություն է, որը բնույթով գրաֆիկական,գծագրական է ևսովորողին ստիպում է մտածել տերմինների,մտքերի ու գաղափարների հարաբերության մաին: Գաղափարների քարտեզ կազմելու համար անհրաժեշտ է գլխավոր առանցքային,հիմնական միտքը նշել թղթի մեջտեղում՝ ուղղանկյան ձևով:Այնուհետև կապակցված գաղափարները պետք է գրել կենտրոնական մտքից ճառագայթող ճյուղերին:

Մտքերի քարտեզագրումը կարելի է համարել մտքերի տարափի մի տարատեսակ:Իրականում դրանք երկուսն էլ նպաստում են նոր նյութի տարբեր մեկնաբանությունների և տեսակետների կուտակմանը: Սակայն տարբերվում են միմյանցից: Այսպիսով՝ գաղափարի քարտեզագրման դեպքում խառնիխուռ ու պատահական մտքերը ավելի քիչ են լինում,քան մտքերի տարափի ժամանակ: Եթե մտագրոհը քաջալերում,խթանում է խիստ տարամետ կողմնային մտածողությունը,ապա գաղափարների ներդաշնակեցմանն ու նոր գաղափարների կերտմանը:



ՄՏԱԾԻՐ- ՉՈՒՅԳ ԿԱԶՄԻՐ –ՔՆՆԱՐԿԻՐ

Մեթոդի կիրառման ժամանակ տրվում են հարցեր, որոնք երկակի պատասխան են ենթադրում: Մտքերի փոխանակման միջոցով սովորողները փորձում են երկակի պատասխանից գտնել այն պատասխանը, որը ամբողջացնում է պատասխանները:

Այս մեթոդական հնարի քայլերը .

1. Առաջին փուլում ասովորողներն ինքնուրույն մտածում են առաջադրանքի շուրջ:

2. Երկրորդ փուլում զույգերով քննարկում են իրենց տեսակետը:

3.Երրորդ փուլում զույգերն իրենց տեսակետը ներկայացնում են ամբողջ դասարանին: Մա բավականին պարզ,բայց արդյունավետ մեթոդական հնար է,որը նպաստում է աշակերտների մտածական հմտությունների զարգացմանը,նոր գաղափարների ի հայտ գալուն:

Ելքի քարտերի լրացում

Ելքի քարտերը լրացվում են 3-2-1 մեթոդով , որը կատարվում է անդրադարձի ընթացքում:

Սովորողները պետք է .

- Գրեն երեք բան, որ սովորեցին այդ դասի ընթացքում,
- Երկու բան, որ շատ կարևոր և արդյունավետ են համարում,
- Մեկ բան, որ վաղն անմիջապե կկիրառեն,
- Առաջարկություններ:

ԱՇԽԱՏԱՆՔ ՓՈՔՐ ԽՄԲԵՐՈՎ

Ուսուցման ձև է, որը սովորողներին հնարավորություն է տալիս դասընկերների հետ փոխանակել իրենց գիտելիքներն ու փորձը, համատեղ լուծել խնդիրներ: Մեթոդի կիրառման ժամանակ սովորողները գիտակցաբար և ակտիվ համագործակցության մեջ են մտնում, քանի որ ունեն ընդհանուր մի նպատակ:

Աշխատանք զույգերով, ենթախմբերով

Երեխայակենտրոն ուսուցումն ապահովելու և ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով շատ կարևոր է զույգերով և ենթախմբերով համագործակցային աշխատանքների կազմակերպումը: Այն երեխաներին հնարավորություն է տալիս համագործակցել, փոխանակել միմյանց հետ իրենց գիտելիքներն ու փորձը, սովորել միմյանցից, ձգտել հասնելու ընդհանուր նպատակին: Երեխաները հասկանում են, որ իրենց հաջողությունը կախված է խմբի բոլոր անդամների ներդրումից:

Նման խմբերին բնորոշ են թիմային աշխատանքի ոգին, ընդհանուր նպատակին հասնելու համար առավելագույնն անելու ցանկությունը, փոխկախվածությունն ու փոխկապվածությունը, սոցիալական փոխազդեցության հմտությունները, խմբի աշխատանքի ընթացքը և արդյունքը մշտապես գնահատելու ու վերանայելու կարողությունը:

Փոքր խմբերով ուսուցումն ունի հետևյալ նպատակները.

1. զարգացնում է խնդիրներ լուծելու կարողությունը,
2. ձևավորում է հաղորդակցման հմտություն,
3. երեխաները սովորում են միմյանցից,
4. զարգանում է երեխայի պատասխանատվության զգացումը,
5. խթանում է թիմային աշխատանքը,
6. ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար,
7. ընձեռում է ակտիվ մասնակցության և ինքնադրսևորման հնարավորություն:

Խ Մ Բ Ա Վ Ո Ր ՈՒ Մ

Մեթոդը գրավոր վարժություն է, որը նպաստում է տվյալ թեմայի վերաբերյալ աշակերտների՝

1. իմացական ոլորտի,
2. ընկալումների,
3. պատկերացումների զարգացմանը

Այս մեթոդը գրավոր վարժություն է, որը սիրով կատարում են գրեթե բոլոր աշակերտները: Այն հնարավորություն է տալիս պատկերացում կազմել որևէ թեմայի վերաբերյալ աշակերտների իմացության, ընկալումների և պատկերացումների մասին: Կատարելով այն՝ աշակերտները հնարավորություն են ունենում տեղեկանալու իրենց ունեցած գիտելիքների ևղրանց միջև գոյություն ունեցող կապերին: Խմբավորումը ներկայացնելիս նկարագրում են խմբավորման քայլերը: Գրել թեմայի առնչվող որևէ առանցքային բառ գրատախտակին կամ թղթի կենտրոնում: Մտագրոհի միջոցով գրել այդ բառին, առնչվող բառերն ու արտահայտությունները: Գաղափարների գրելն ավարտելուց հետո գծիկներով միացնել այն բառերը, որոնք իրար հետ են առնչվում: Հնարավորինս շատ մտքեր գրել մինչև դրանց տրված ժամանակը կսպառվի: Առաջին անգամ այս վարժությունը ներկայացնելիս անհրաժեշտ է ընտրել այնպիսի թեմա, որ խմբի բոլոր անդամների համար հոգեհարազատ լինի: Այս մեթոդը մեկ անգամ աշակերտները խմբով կատարելուց հետո աշակերտները այնքան են հմտանում, որ կարողանում են կատարել ինչպես փոքր խմբերով, այնպես էլ անհատական:

ՓՈՒՆԵՐԳՈՐԾՈՒՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

/ՓԳՀ/ ՄԵԹՈՂ

Արդյունավետ մեթոդական հնար է, որն օգնում է սովորողին տեքստը կարդալու ընթացքում վերահսկել սեփական ընկալումը:

V	—	+	?	!
Գիտեմ	Իմ ինացածին հակասում է	Նոր տեղեկու թյուն է	Զգիտեմ	Հետաքրք իր է, կարելի է քննարկել

Կարդալու ընթացքում արված նշանները ծառայում են որպես տեղեկատու՝ հաստատված կամ հերքված պատկերացումներն ի հայտ բերելու համար : Տեքստերի (հատկապես՝ սկզբնաղբյուրների) հետ արդյունավետ աշխատելու համար կարևոր է «Փոխգործուն գրառումների համակարգ» մեթոդի կիրառումը:

Մեթոդն արդյունավետ է կարդալու միջոցով նյութի ընկալման ընթացքը վերահսկելու համար:

Ընթերցելով նյութը՝ սովորողները նշումներ են կատարում՝ օգտագործելով ՓԳՀ-ի հետևյալ նշանները.

Ընթերցանության ընթացքում այս նշանների օգտագործումը նպաստում է ակտիվ, քննադատական ուսուցմանը՝ նորը, հակասականը և անհասկանալին ընդգծելու առումներով:

ՓԳՀ նշանների առատությունը արտահայտում է ընթերցողի ակտիվության աստիճանը և տեքստի կատարած աշխատանքի արդյունավետությունը: Արդյունավետ յուրացնելու համար օգտակար է, որ յուրաքանչյուր սովորող իր համար կատարի դասակարգում և կազմի աղյուսակ հետևյալ ձևով.

ՔԱՌԱԲԱԺԱՆ

Հետաքրքիր մեթոդական հնար է, որը հարմար է հատկապես տեքստի հետ աշխատելիս: Քառաբաժանը արդեն ներկայացված շատ մեթոդական հնարների նման կարելի է կիրառել մեծ կա փոքր խմբերով կամ անհատական աշխատանք կատարելիս: Աշխատանքը սկսելու համար անհրաժեշտ է մաքուր թուղթ բաժանելով 4 մասի: Քառաբաժանը հիմնականում գրավոր աշխատանքի ձև է, քանի որ անհրաժեշտ է մտքերը համապատասխանաբար գրառել 4 բաժիններից յուրաքանչյուրում: Բաժինների հանձնարարությունները պատահական չեն ընտրված դրանք համապատասխանում են նյութի ընկալման և մտքի զարգացման ընթացքին հետևաբար նպատակահարմար չէ դրանք փոփոխել: Կարելի է իհարկե դրանք զարգացնել նկատի ունենալով ընկալման և մտածողության մակարդակները / օրինակ ըստ Բլումի դասակարգման/:

ինչ գիտեի ?	ինչ իմացա ?
ինչպես կարող եմ օգտագործել?	Ինչ եզրակացություն արեցի

Քառաբաժան աղյուսակի վերը նշված երկու ձևերը նպատակահարմար է լրացնել ըստ համարակալման: Անհատական աշխատանքի դեպքում գույգերն իրենց գրառումները ներկայացնում են միմյանց, ապա ամբողջ թիմին: Զույգի կամ թիմի ընտրությամբ աշխատանքը ներկայացվում է ամբողջ դասարանին: Հարկ է նշել որ քառաբաժանը նպատակահարմար է օգտագործել դասի կշռադատման փուլում: Ցանկացած դասուսուցում և մեթոդների կիրառում տալիս է սովորողներին գիտելիք: Գիտելիքների յուրացումը թույլ և ուժեղ սովորող աշակերտների մոտ կատարվում է տարբեր ձևով: Մանկավարժի խնդիրն է հաշվի առնել աշակերտների ընդունակությունները , կարողությունները: Այս տեսակետից հետաքրքիր է Բենջամին Բլումի առաջարկած ուսուցման դասակարգումը: Բլումը գտնում է, որ ուսուցման ընթացքում աշակերտը ոչ միայն ձեռք է բերում գիտելիքների հանրագումար և մտապահում, այլ նաև համեմատում է դրանք իր ունեցած գիտելիքների հետ: Նոր գիտելիքները դարձնում է կիրառական, գնում դեպի գիտելիքների խորացում ու վերլուծություն:


ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՆԻՎ

Գնահատման անիվ մեթոդի նպատակն է գնահատել խմբի աշխատանքը:
Ընթացքը.

1. Սովորողները պետք է իպենց խմբի աշխատանքի գնահատման չափանիշներ որոշեն: Չափանիշների թիվը կարող է տարբեր լինել, սակայն դրանք չպետք է գերազանցեն 10-ը:

2. Այնուհետև, գրատախտակին, կրկնությունները բացառելով, այն բոլոր չափանիշները, որոնց հետ համաձայն է դասարանը: Չափանիշները համարակալում են:

3. Յուրաքանչյուր խմբին խնդրեք գծանկարել մի անիվ՝ անվաճաղերի այնքան թվով, որքան որ չափանիշներ են ընտրվել: Անվաճաղերի վրա՝ շրջանի դրսի կողմից, պետք է գրել չափանիշների համարները: Անվաճաղերը ներկայացնում են մի սանդղակ, որի կենտրոնում ամենացածրը 0 կետն է, իսկ շրջանագծի վրա ամենաբարձրը՝ 10 միավոր նշանակող կետը: Անհատները պետք է գնահատեն խմբի աշխատանքը ըստ զանազան չափանիշների և յուրաքանչյուր չափանիշի հատկացնեն միավորներ՝ անվաճաղի վրա նշում կատարելով:



ԷՔՍԿՈՒՐՄԻԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Էքսկուրսիոն մեթոդը օգտագործվում է դպրոցական կյանքի տարբեր բնագավառներում և հետապնդում է ինչպես կրթական, այնպես էլ դաստիարակչական նպատակներ: Էքսկուրսիան ուսուցչին հնարավորություն է տալիս կոնկրետ ու վառ փաստերի վրա երեխաներին ցույց տալ ուսումնասիրվող առարկաների ու երևույթների միջև եղած կապերը, պատճառի ու հետևանքի փոխկապվածությունը և մարդու վերաստեղծող ու վերաշինող ուժը:

Էքսկուրսիան դիտվում է որպես ուսուցման կազմակերպման միյուրահատուկ ձև, որպես աշխարհաճանաչողական գիտելիքների հաղորդման միջոց:

Գիտելիքի հաղորդումը կարելի է կատարել դաս-

էքսկուրսիաների միջոցով՝ նկատի ունենալով, որ

այդ ձևով յուրացումն ավելի կայուն ու խորն է լինում, իսկ դասն ավելի աշխույժ ու հետաքրքիր է անցնում:

Էքսկուրսիայի կրթադաստիարակչական նշանակությունը:

Էքսկուրսիաները ընդլայնում են

աշակերտների մտահորիզոնը, նրանց միտքը հարստացնում են նոր տպավորություններով, անմիջականորեն դիտել են տալիս այնպիսի առարկաներ ու երևույթներ, որոնք դպրոց բերել հնարավոր չէ, հետաքրքրություն են առաջացնում դեպի իրենց շրջապատի բույսերը, կենդանիները, մարդկային հասարակությունը և մարդու աշխատանքը բնության և հասարակության մեջ:

Էքսկուրսիաները բացառիկ կարևոր նշանակություն ունեն

նաև դաստիարակչական տեսակետից: Դրանք երեխայի մեջ զարգացնում

են ուշադրություն ու դիտողունակություն, մշակում են գիտակցական

կարգապահություն ու կազմակերպվածություն՝ դպրոցից

դուրս իրենց պահելու ուսուցչի կարգադրությունները ժամանակին,

ճիշտ ու անթերի կատարելու ունակություն:

ՁՆԱԳՆԴԻ

Ձնագնդին սովորողների կարծիքների փոխանակման, ընտրության, դրանց հավաքագրման և խմբի գաղափարների ամբողջացումն է: Արդյունավետ է կիրառել փոքր՝ 2-4 հոգանոց խմբերով:

Ընթացքը .

1. Սովորողներին ներկայացնել որևէ պատմություն կամ առաջադրանք:

2. Անհատական առաջադրանք, ինչ միտք է ծագում առաջին հենքին:

Գրել կարծիքների կամ գաղափարների ցանկ՝ այդ պատմության կամ առաջադրանքի վերաբերյալ (4 րոպե):

1. Կազմել զույգեր և միմյանց ներկայացնել անձնական կարծիքները, այնուհետև միասին ձևակերպել երկուսի համար ընդհանուր 3-5 կարծիք, որոնք կընտրվեն անհատական կարծիքների ցանկից: Գրել դրանք թղթի վրա (6 րոպե):

2. Կազմել չորս հոգանոց խմբեր, ներկայացնել զույգերով կազմած կարծիքները և նորից ձևակերպել չորս ընդհանուր կարծիքներ ամբողջ խմբի համար: Խումբը գրի դրանք առանձին թղթի վրա (8 րոպե):

3. Երկուական չորս հոգանոց խմբերը միանան և կազմեն ութ հոգանոց մեծ խմբեր: Խմբերը ներկայացնեն իրենց կարծիքները, նմանություններն ու տարբերությունները: Կրկին ձևակերպել չորս ընդհանուր կարծիք ամբողջ խմբի համար:

4. Խմբերի ձևակերպած բոլոր կարծիքները ներկայացնել դասարանին:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետությունում կրթական քաղաքականության իրականացման գործում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է կրթության որակի բարձրացմանը: Նոր տեխնոլոգիաների և ինտերնետի օգտագործումը զգալիորեն ընդլայնում է ուսումնական նյութի որոնման, հաղորդման և յուրացման հնարավորությունները՝ որակական նոր բնույթ հաղորդելով ուսուցման կազմակերպմանը և ապահովելով ինքնակրթության ու շարունակական կրթության լայն հնարավորություն: Համակարգիչը դաբոցում դիտարկվում է որպես ուսումնառության հիմնական միջոցներից մեկը, իսկ ինֆորմատիկան (տեղեկագրությունը)՝ ուսումնական նյութի արդյունավետ յուրացմանը նպաստող համապիտանի առարկա:

SZS-ի օգտագործումը որակապես փոխում է ուսուցչի դերը, ուսուցիչը դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպող, նրան օժանդակող և գնահատող գործընկեր: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները սերտորեն առնչվում են բոլոր առարկաների դասավանդմանը: Անհրաժեշտ է դառնում դաբոցներում ստեղծել էլեկտրոնային գրադարաններ: Միջին դաբոցի ցածր դասարաններում ինֆորմատիկայի դասավանդման ընթացքում շեշտը դրվում է համակարգչով աշխատելու հիմնական հմտություններ մշակելու, ստեղծագործությունը խրախուսելու վրա: Առարկայի դասավանդումը նպաստում է նաև ժամանակակից համակարգչային ուսուցողական ծրագրերով այլ առարկաներից որոշակի նյութ հաղորդելուն, սովորողների կողմից դրա յուրացմանը:

Տեխնոլոգիայի դասաժամին կարևոր է նաև ուսուցման դիդակտիկ մեթոդների կիրառումը, այն է համապատասխան նկարների ու գծագրերի օգտագործում, ինչպես նաև տեխնիկական միջոցների, այն է դիաստֆիլմերի ու կիրառում և իհարկե համակարգչային տեխնիկայի օգտագործում, որը շատ արդյունավետ է և ունի լայն ու բազմաբովանդակ հնարավորություն: Համակարգիչով ցույց է տրվում և դասի վերաբերյալ նկարներ , դասի թեմային առնչվող տեսանյութեր , խաչքառեր,օնլայն հարթակում աշակերտների ձեռքի աշխատանքների ցուցադրում, անգամ որևէ հատված այս կամ այն գործնթացի սլայդների ձևով/ պրեզենտացիա/:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ելնելով վերը նշվածից, կարելի է գալ հետևյալ համոզմանը, որ <<Տեխնոլոգիա >> առարկայի դասաժամերին նոր մեթոդների կիրառումը նպաստում է դասապրոցեսին աշակերտների ակտիվության բարձրացմանը, ձևավորվում է խմբում աշխատանք կատարելու ընդունակությունները, ձևավորվում և զարգանում է աշակերտների խոսքի վերարտադրման՝ կարծիք արտահայտելու, վերլուծելու, քննարկելու, մեկնաբանելու կարողությունները և հմտությունները:

Յուրաքանչյուր մեթոդ ուղղված է կոնկրետ առաջադրանքի լուծմանը, իրավիճակի բացահայտմանը, այսինքն՝ մանկավարժը մեթոդները ընտրում և կիրառում է՝ կախված իրավիճակից, կարևորվում է իրավիճակային մոտեցումը, նաև աշակերտի տարիքային, անհատական, հոգեբանական առանձնահատկությունները: Այսպիսով,

ակտիվ ինտերակտիվ մեթոդների կիրառումը տեխնոլոգիայի դասաժամին նպաստում է՝ ուսումնական դրական խթանի ձևավորմանը, սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացմանը, կրթական գործընթացին սովորողների ակտիվ ներգրավմանը, ինքնագործունեության խթանմանը, ճանաչողական գործընթացների զարգացմանը՝ խոսք, հիշողություն, մտածողություն, ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացմանը, ստեղծագործական մտածելակերպի զարգացմանը, աշակերտների անհատական հաղորդակցական ոլորտի զարգացմանը, աշակերտի անհատական-յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում, ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:

Առաջարկություն - կրթության որակի բարձրացման տարրերից մեկը հանդիսանում է առարկայական կաբինետները, որոնք պետք է լինեն հազեցած դիդակտիկ նյութերով, պրոյեկտորով, կահավորված համապատասխանի ըստ առարկայի առանձնահատկության :

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գ.Ե.Ղույումչյան, «Մանկավարժություն», գիրք 1-ին, էջ 14, Երևան, 2005 թ.
2. Սիսյան Ս., Բաբայան Ի., Աղուզումցյան Գ., Բարձրագույն դպրոցի մանկավարժություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Ե., 2015թ.
3. Պետրոսյան Հ.Հ. Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ Երևան ՏՄԱ-Ջոն
4. 2008թ Պետրոսյան Հ., Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2010, էջ
5. Վ.Գյուլազյան Լ. Առուշանյան Մ.Գասպարյան Ուսուցչի ուղեցույց տետր Երևան 2009թ.
6. Հանրակրթության պետական կրթակարգ Չափորոշիչներ ծրագրեր մեթոդներ Երևան 2007թ.
7. Հովսեփյան և ուրիշներ., <<ուսուցչի ձեռնակ>>, Երևան <<Տիգրան Մեծ>> 2014 թ.
8. Մ.Պետրոսյան <<Կերպարվստի դասավանդման առանձնահատկությունները>> Երևան 2011թ.
9. Կ.Պապիկյան <<Տեխնոլոգիայի դասավանդման մեթոդիկա>>, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան 2019թ.
10. Հանրակրթության պետական կրթակարգ Չափորոշիչներ ծրագրեր մեթոդներ Երևան 2007թ
11. Ասատրյան Լ., Հակոբյան Գ., Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն, Ե., 2011 թ., 178 էջ